«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1672-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի

N 1672-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հ**այաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին**» օրենքի 43.1-ին հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «**Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանելու մասին**» N 1672-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- N1 հավելվածից հանել «ՀՀ կառավարությանն առընթեր» բառերը,
- N2 հավելվածում՝

ա. 1-ին և 5-րդ կետերից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը,

բ. 2-րդ կետից հանել «հավաքների անցկացման ժամանակ հասարակական կարգի պահպանությանը ներգրավված» բառերը, իսկ «վերաբերյալ» բառը փոխարինել «առիթով» բառով,

գ. 5-րդ կետից հանել «նորմատիվ» բառը,

դ. 12-րդ կետից հանել «հավաքների ժամանակ հասարակական կարգի պահպանությանը ներգրավված» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

«____» _____ 2019թ.

Երևան